

աւուր (20 օգոստոսի 1210) գրէ հակիրճ թուղթ առ կաթողիկոսն եւ առ համօրէն ուխտ եկեղեցւոյն Հայոց, զի չունի ոք իշխանութիւն բանադրել զՀայս, բայց յայնմանէ՝ որում տացի օրինաւոր կամ յատուկ հրաման առ այն. եւ մի՛ որ իշխանութիւն եւս ունիցի՝ վայրապար ընդ բանիւ արասցէ, եւ եթէ այսպէս առնէ՝ անվաւեր եղիցի¹⁸³:

Որպէս յեղանակ դեսպանութեան չորեցուն նուիրակաց Պապին անձանօթ մնաց, այսպէս եւ երկրորդս այս, եպիսկոպոսին Կրեմոնայ. զի ոչ եւս յիշի անուն եւ գործ նորա ՚ի յետագայ թուղթս Իննովկենտեայ եւ ՚ի պատասխանիս նոցին. այլ յայտ այս է, զի ՚ի ժամանակի գրութեան յանձնարար թղթոյն՝ պատերազմն խիստ էր Հայոց ընդ Անտիոքեայս. Ռուբէն անուամբ Բրնձի կայր յարքունիս Լեւոնի, եւ ՚ի նոյն աւուրս (սեպտ.) իբրեւ տէր Անտիոքայ հրովարտակ առնէր եւ հաստատէր զառաջին եւ զնոր տուրս տեղեաց՝ առ ասպետս Հիւանդանոցին, եւ Լեւոն ստորագրէր ընդ այլոց՝ իբրեւ վկայ¹⁸⁴: Ի նոյն աւուրս (3 օգոստ. 1210) վաւերացուցանէր եւ Քահանայապետն զտուրս Լեւոնի առ նոյն ասպետս¹⁸⁵. այլ յետ այսոցիկ՝ յելս կոյս տարւոյն՝ ակն ունելի էր ժամանելոյ նորոյ նուիրակին կամ պատրիարքին Երուսաղեմի ՚ի Հայս կամ յԱնտիոք. եւ ՚ի դէպ է կարծել՝ եթէ եկին մին կամ միւսն, եւ ոչ ինչ օգտեցան, վասն երկուստեք յամառելոյ վիճողացն ՚ի կարծեցեալ իրաւունս իւրեանց, կամ թէ դարձեալ դրժեաց ինչ կոմսն, եւ պնդագոյնս վառեաց զՏաճարականսն ընդդէմ Լեւոնի: Որ զիարդ եւ է՝ աներկբայ է սրտմտութիւն թագաւորին՝ ՚ի վերայ ձիաւորացն խրոխտացելոց, եւ ընդ անօգուտ ժամավաճառութիւն բանագնացութեանցն, յորս միշտ զինքն տեսանելով իրաւացի, զկոմսն առաւել քան զարժանն համարէր արդարացուցեալ, նոյնպէս եւ զասպետսն. որք, որպէս վերագոյնդ նկատեցաք, իբրեւ նուիրականք ոմանք եւ պիտանիք ՚ի գործ մարտի ընդդէմ այլակրօնից, ներողութիւն գտանէին սղալանացն. վասն որոյ տաղուկացեալ այնուհետեւ ՚ի խօսից՝ ձեռն արկ սաստկագոյնս մղել զզէնսն, եւ ՚ի տագնապի կացոյց գնոսա: Հնչեաց դարձեալ բողոք նոցա յատեան Քահանայապետին. եւ սա ճեպեցոյց զպատրիարքն Երուսաղեմի՝

¹⁸³ «Nullus omnino qui ordinariam vel delegatam jurisdictionem in eos vel vestros subditos non habuerit, sententiam ferre praesumat».

¹⁸⁴ Cartulaire, 132.– Թուղթք Իննովկ. ԺԳ. ԸԺԹ:

¹⁸⁵ Cartulaire, 114.